այլ եւս բաղումս, եթէ հնարեսցի ինչ 'ի կողմն Հայոց։

Իսկ Բդեշխն թէպէտեւ յոյս ետ նմա վասն դարման գտանելոյ իրացն, այլ հրամայեաց բերել առ ինքն զվիճակնս Ս. Յակոբայ եւ պահեալ զայն առ իւր յաւանդ՝ առաքեաց արս և ետ կնքել զդուռն Ս. Յակոբայ։ Եւ ապա ըստ աղաչելոյ Եղիազարու եւ ըստ յաճախելոյ խոստման դրամոցն, գրեաց ինքնին Բդեշխն թուղթ վկայութեան առ Եպարքոսն՝ թէ սուտ է այն ամբաստանութիւն Յունաց, զոր գրեալ են առ քեզ վասն Հայոց. զի ահա ասէ՝ վիճակ Հապեշաց 'ի ձեռս Յունաց է, և ոչ Հայոց. և եւս՝ չիք չինեալ Հայոց եկեղեցի 'ի Գաղա. զի այն եկեղեցի՝ զորմէ գրեալ են Յոյնք, մզկիթ մեր է, ասէ, 'ի վաղ ժամանակաց։ Իսկ զոր հրամայեալ է ձեր, թէ տեղին Ս. Յակոբ կոչեցեալ՝ տացի Յունաց, անմարթ է լինիլ. զի ամենայն ազգ զիւր առանձին վիճակ ունի յԵրուսաղէմ, եւ Ս. Յակոբ Հայոց է 'ի սկզբանէ անտի։

Զայս այսպէս գրեալ Բդեշխին Դամասկոսի՝ յղեաց ըզթուղթն առ Եպարքոսն 'ի ձեռն ուրումն իշխանի. ընդ նմին առաքեաց առ նա և աղնիւ ընծայս, և խնդրեաց գիր հաստատութեան՝ զի մի ելցէ Ս. Յակոբ 'ի ձեռաց Հայոց։ Այլ յառաջ քան զժամանել իշխանի Բդեշխին 'ի Կոստանդինուպոլիս, եկն եհաս անդր Դաւիթ վարդապետ Բերիացի, և ծանոյց Հայոց վասն չփոթութեանցն Երուսաղէմի, ունելով թուղթ աղաչանաց 'ի դիմաց Եղիազարու, և ոսկի յոլով 'ի ալէտս ծախուց, զորս յանձնեաց Ռուհիջան գործակալին։

Եւ նորա առեալ զոմանս 'ի մեծամեծացն Հայոց, գնաց վաղվաղակի առ ոտս Եպարքոսին, որ հանդերձեալ էր չուել յԱդրիանուպոլիս. այլ երկրորդն նորա, որ այն ինքն է Վէզիր քեահիասի՝ իմացեալ զգալուստ նոցա, 'ի բաց վարեաց զնոսա՝ գիտացեալ թէ յինչ պատճառս են եկեալ։ Եւ իբրեւ մեկնեցան նոքա անտի՝ եկն եհաս 'ի Կոստանդինուպոլիս թղթաբեր իշխանն, որում հանդիպեալ փութանակի Ռուհիջան հանդերձ 30 արամբք յերեւելեաց Հայոց՝ ետ նմա երաշխաւորութիւն, թէ պատրաստ եմք վճարել որչափ ինչ դրամք երթիցեն վասն հաճելոյ զեպարքոսն 'ի ստանալ վերստին զՍ. Յակոբ։ Եւ իշխանն ելեալ